

նէից, որք ի թարվէղ քաղաքի զետեղեալ նստիք, մեծամեծաց եւ փոքունց ի տ(է)ր խնդալ: Ծնորհք ընդ ձեզ եւ խաղաղութի(ւն) յա(ստուծո)յ հօրէ եւ ի տ(եառ)նէ յ(խառ)սէ ք(րիստո)սէ եւ ի ս(ուր)բ հողւոյն կենարարէ, եւ յառատածիր պարգեւատուէ եւ շնորհաբաշխ բարերարէ: Օրհնութի(ւն) հօր, պահպանութի(ւն) որդւոյ, եւ նախախնամութի(ւն) ամենաս(ուր)բ հողոյն, միշտ եւ հանապազ եկեացէ եւ հանդէիցէ ի վ(ե)ր(ա)յ, եւ օր ըստ օրէ, լցեալ զձեզ փառօք եւ արդասալիր ճոխութ(եամ)բ, իբրեւ զորթըս եւ զոստս, սաղարթախիտ, եւ պըտալից զբախտ անկեալ. ի վնացս հողոյն վաստակաց, կալ մնալ ձեզ խաղաղական կենօք, եւ պարագայց ամօք, մինչ եւ ի խորին ծերութի(ւն) ամէն: Այլեւ ա(ւր)հնեսցէ զձեզ տ(է)ր ա(ստուա)ծ մեր, եւ զարդարեսցէ հողով եւ մարմնով, տամբք եւ տեղօք, զարմօք եւ զաւակօք, ընչիւք եւ ապրանօք, սիրելիօք եւ բարեկամօք: Եւ ընդ ա(ւր)նութե(ան)ս ծաներուք սիրելիք մեր ի տ(է)րն դրէ հաւատարիմ հաղարապետ խորոցն ա(ստուծո)յ սրբազան առաքեալ Պողոս. Զգոյշ լերուք զուցէ կողոպտիցէ ոք զձեզ ճարտարութ(եամ)բ եւ սնտոի խարէութ(եամ)բ, պատրէն զմարդ, զբարին խոստանան եւ զչարն շնորհէն, որպէս օձն խորամանկ զնախամայրն եւա զա(ստուա)ծութի(ւն) խոստացաւ, եւ զգթոին ժառանգեցոյց, եւ զտէրութ(եան) պատիւ աստ ունել, իայց ծառայ մեղաց զբաւեաց զնա, զայն ասէ առաքեալն թէ ճարտարամտաց եւ խարերայից մի լսէք, քանզի եւ նեռին որ ի վախճանի յայտնելոց է մարդոյն անօրէնութե(ան) եւ որդոյն կորստեան այս է սովորութիւն որ քաղցրարանութ(եամ)բ որսայ զմարդիկք, վ(ա)ս(ն) զի ազատ... խոտանայ, եւ ապականութե(ան) ծառայացուցանէ զոր եւ նեռինք բաղումք յայտնեալ են ի մէջ ազգիս յայսր ի մերումս ժամանակի որք ի բնակութ(են)է հետեւին յանուղղայ վարուց, եւ նովաւ յառաջանան ի չարիս, յետ այնորիկ տեսանէն զինքեանր նշկահեալ եւ արհամարեալ յազդէս, եւ մանաւանդ ի գլխաւորազոյն առաջնորդաց հալածեալք, զէմ եղեալ փախ-

չին ի Ֆռանդստան, եւ քանի մի տարի անդ յամենան զի թերեւս ծածկեալ անյայտ լիցի զառաջին խէնչութի(ւն) իւրեանց, եւ մանաւանդ (քանի մը բառ ծալքին մէջ անընթեռնի) հետոյ եկեալ մտանեն ի մէջ ազգիս իբրեւ դայլ արբացի որ զմորթ ոչխարի ունելով անկանի ի հօտս խաչանց պատառէ եւ ցրուէ ըզգարսն: Սոյն գունակ եւ նոքա եկեալ փռուէկտեն եւ զահալիթեն հօտսն զթողովուրդս քրտնաջան մշակին ք(րիստո)սի եւ բազմաչարչար նահատակին եւ առաջնորդին մերոյ Հօրն սրբ(ո)յն Գրիգ(ո)րի լուսաւորչին զորոյ զերախտիսն եւ զաշխատանս անփոյթ առնօղն ուրացութեան կամեր զոր պարտիմք արեամբ եւ մահու չափ կուրիլ եւ պատերազմիլ զի խորտակել մարթասցուք զզինուորսն ս(ա)տ(ա)ն(ա)յի որ զինուորին ընդէմ ճշմարտութ(եան), այսինքն այնօրիկ զոր ի վերոյ ասացաք զչարածրծիքն եւ անկեալքն յուղղութ(են)է լօթոան սեւազլուխքն վաթարք, զորոյ բազմօքն զանց արարեալ, զմինն ձեզ բայցմօքն զանց արարեալ, զմինն ձեզ բայցայայտեսցուք որ այժմ ի թարվէղ քաղաքիդ է պատրաստական, զգլխասարաս, զս(ա)տ(անա)յա... չբարսեղ անուամբ չվարդապ(ե)տդ, որ ոչ վ(ա)րդ(ա)պետ, այլ բանսարկուին զործապետ նստեալ ի մէջ ք(ա)ղ(ա)քիդ ըստ չար ախորժակաց իւրոց զանպիտան բարբաջմունս առնէ, զՖռանդսն զովելով եւ զազգս անարդելով. յար եւ հան(ա)պ(ա)ղ իւր նմանիքն ժ(ո)ղ(ո)վէ եւ ինքեան համախոյ առնէ սուտահող բանիւք զանմեղսն եւ զտգէտսն որսա, զզորա չար համբաւսն լսելով մեք հանապազ աղեցաւ եւ լերդախոց լինիմք թէ ո՞վ իցէ բնիկ շուն. որ զս(ուր)բ առաք(ե)լ(ո)ց եւ ս(ր)բազան հայր(ա)պ(ե)տ(ա)ց, եւ զերջանիկ նախնեացն մերոց զուղղափառ դաւանութի(ւն) ժխդէ քաղաքիդ . . . . . թուղթս գրել ձեզ ա(ստուա)ծասէր ջուղայեցի վաճառականացդ . . . . . որոց ունկնդիր լինին մեզ, պատուիրելով պատուիրեմ ձեզ. եթէ սիրէք զ(աստուա)ծ եւ զմեր ա(ւր)հնութի(ւն) կամիք պիտի այդ զիւրաշնչիդ խորչիք, զի պատուիրեալ ի դրոց ս(ր)բ(ո)ց յայսպիսիացդ որոչեկ